

---

**ԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԽՈՍՔԻ ԱՅԼ  
ՏԵՍԱԿՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

**ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Անցած դարի կեսերից լեզվական խոշորագույն միավորի՝ տեքստի հանդեպ հետաքրքրությունը աճեց: Սակայն տեքստը համակողմանի բնութագրող անվիճելի սահմանում դեռ չի ձևավորվել: Ուսումնասիրողների մի մասը տեքստ է համարում միայն գրավոր ընդարձակ խոսքը, իսկ մյուս մասը՝ նույնիսկ ցուցանակին գրված մեկ բառը: Կարծում ենք՝ տարակարծությունների պատճառը այն է, որ մեծ մասամբ հաշվի չի առնվում տեքստի անվերջ երկատվածությունը. մի կողմից՝ այն օբյեկտիվ իրականության որևէ հատվածի անհատական վերլուծություն կամ վերարտադրում է, մյուս կողմից՝ հաղորդակցման միջոց: Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին ենթադրում է արտահայտության երկու ձև՝ լեզվական և ոչ լեզվական, վերջիններից յուրաքանչյուրն էլ՝ անհատական և ընդհանուր: Տեքստի երկատվածությունը հաշվի առնելով կարող ենք ասել, որ տեքստն ընդհանուր առմամբ արտահայտված միտքն է, մասնավորապես լեզվական տեքստը՝ լեզվական միավորներով արտահայտված միտքը, իսկ ոչ լեզվական տեքստը՝ ոչ լեզվական միավորներով արտահայտված միտքը՝ գույներ, նոտաներ, շարժումներ և այլն: Կարելի է սահմանել, որ *վերլուծության հնարավորություն տվող ցանկացած երևույթ տեքստ է*, իսկ լեզվական տեքստը *լեզվական միավորներով արտահայտված ասելիքն է կամ վերլուծությունը*: Այն, որ նույնիսկ ոչ լեզվական միավորներով արտահայտված ասելիքը վերածելի է կամ ի վերջո վերածվում է լեզվական միավորներով ինչ-որ կառույցի, կասկածից վեր է, և խնդրի ամենաբարդ կողմն է: Ցանկացած դեպքում և ցանկացած արտահայտչամիջոցով ստեղծված տեքստը հաղորդակցում է իրականացում: Միանգամայն կանխատեսելի է, որ հաղորդակցման ցանկացած փոփոխություն ուղղակիորեն ազդելու է նաև տեքստի վրա: Հաղորդակցման նոր միջոցները ասպարեզ բերեցին տեքստ միավորի նոր տեսակ, որի կառուցվածքային առանձնահատկությունները հատկապես հաստատում են, որ ոչ լեզվական միջոցները հաճախ կարող են դառնալ կամ լեզվական տեքստի անփոխարինելի բաղադրիչ, կամ հանդես գալ որպես լեզվական տեքստի փոխարինող:

Մասինո Բալդինին հաղորդակցության պատմության մեջ երեք հեղափոխություն է նշում՝ գրի ստեղծումը, տպագրության գյուտը, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների ի հայտ գալը<sup>1</sup>: Իսկապես, այդ երեքն էլ իրենց մեծ ու անփոխարինելի դերն ունեցան մարդկային հաղորդակցման պատմության մեջ՝ մեկը մյուսին լրացնելով: Բոլոր նշվածներն էլ ծառայեցին խոսքը՝ փորձը, գաղափարները, զգացմունքները մեկ ուրիշին հաղորդելու:

---

<sup>1</sup> Տե՛ս **Baldini M.** Storia della comunicazione. Roma, 1995, էջ 14:

Կարծես թե նոր է սկսվել հեռահաղորդակցության պատմությունը, մինչդեռ դրա սկիզբը դեռևս քարանձավային ժամանակներում պետք է փնտրել<sup>2</sup>:

Հեռահաղորդակցության սարքավորումները աշխարհ եկան ռազմական ոլորտում և հետագայում տարածվեցին նաև հասարակական կյանքում<sup>3</sup>: Այդ սարքավորումները մեր իրականության մեջ իրենց գոյությամբ «կազմեցին» կամ «ստեղծեցին» բառիս բուն իմաստով բոլորովին այլ իրականություն, որտեղ ջնջվում են ազգերի ու լեզուների միջև սահմանները:

Որպես լեզվական տեքստի դասակարգման սկիզբ ընդունելով խոսքի արտահայտության երկու մեծ տեսակները՝ բանավորն ու գրավորը, հիշենք նաև դրանց դրսևորման ձևերը՝ որպես բանավոր խոսքի տեսակ՝ գրականը և խոսակցականը, իսկ գրավորի խոսքի մեջ հետևյալ բաժանումը կատարենք՝ իրական-նյութական և իրական-կարծեցյալ<sup>4</sup> (virtual): Իրական-նյութականը, պարզ ասած, թղթին եղած գիրն է, այն, որ տեսնում ենք թղթին հանձնված, ընդ որում, նշանակություն չունի՝ ձեռագիր, թե տպագիր: Իրական-կարծեցյալ համարենք այն բոլոր գրերը, որ տեսնում ենք էկրանին, ընդ որում՝ էկրանի տեսակը կարևոր չէ:

Խոսքի նշված տեսակներից յուրաքանչյուրը իր դերն ու հատկություններն ունի, դրանք բոլորը անընդհատ փոխազդում են և փոխկապակցված են: Հատկանշական է, որ Բալդինին էլեկտրոնային ձևը նույն աշխատության մեջ համարձակորեն դնում է մտքի, խոսքի բանավոր և գրավոր տեսակների կողքին՝ ճիշտ է՝ ընդամենը ուրվագծելով, որ դրանք չեն կարող իրարից անկախ գոյություն ունենալ: Հարցն այն է, որ դրանք կարող են գոյություն ունենալ միանգամայն իրարից անկախ, այլ է, որ խոսքի արտահայտության այս բոլոր ձևերը ոչ միշտ են հաջորդում իրար: Պարտադիր հաջորդականություն չենք տեսնում, քանի որ մի բան ասելու համար պետք է ձևավորված միտք ունենալ, բայց պարտադիր չէ միտքը գրի առնելու համար նախ այն բարձրաձայն արտահայտել: Խոսքի գրավոր, տպագիր ու էլեկտրոնային տեսակները, ճիշտ է, հաջորդաբար են առաջացել, բայց մեկը մյուսից ուղղակի կախման մեջ չէ: Գրավոր խոսքը բոլոր դեպքերում բանավորի կամ մտքի արտահայտությունն է: Այն կախված է մտքից (չենք քննարկում թելադրությունը. այստեղ պետք է մի պահ մոռանալ «բանավոր» օղակի մասին, որովհետև դրա դերը այս դեպքում եական չէ): Նշանակում է, որ գրավոր խոսքը կարող է լինել ուղղակի և միջնորդված. առաջին դեպքում միտքն ու գիրը չունեն «միջնորդ», իսկ երկրորդ դեպքում ձայնը կարելի է «միջնորդ» անվանել մտքի և գրի միջև: Առաջին դեպքում կարծես թե ամեն ինչ պարզ է. ասվածը կամ մտածվածը գրված է, ու վերջ, եթե քննարկենք ակնթարթից էլ կարճ կամ բազմա-

<sup>2</sup> Տե՛ս Schramm W. The Story of Human Communication: From Cave Painting to Microchip. New York, 1988, էջ 32:

<sup>3</sup> Տե՛ս Dahlman E. Parkvall S. 3G Evolution: HSPA and LTE for Mobile Broadband. Amsterdam, 2008, էջ 8:

<sup>4</sup> «Երևակայական» բառը որպես virtual-ի հայերեն համարժեք այնքան էլ հաջող չենք համարում տեքստը բնորոշելու համար, քանի որ «երևակայական տեքստ» արտահայտությունը նախ՝ իմաստային թյուրիմացություն կարող է առաջացնել, երկրորդ՝ կարծում ենք՝ տեքստը, որ էկրանին է գրվում, դադարում է երևակայական լինելուց. այն նույնքան իրական է, որքան ինքը՝ միտքը, որ չենք շոշափի, բայց կա: Եվ, ի վերջո, ամեն երևակայական չէ, որ հնարավոր է իրական դարձնել, իսկ նշված տեսակի տեքստերը ցանկության դեպքում ու ցանկացած պահի կարող են վերածվել լիարժեք իրականի: Կարծում ենք՝ տեքստի այս տեսակը կարելի է նաև անվանել «էկրանային տեքստ»:

թիվ ակնթարթներ տևած «խմբագրական աշխատանքները» մտքում: Ինչպիսիք լինի միտքը, այդպիսին էլ պետք է որ լինի գրավորը: Դեռ չարտահայտված միտքը թղթին հանձնելու ընթացքը հենց այդպիսին էլ կա: Այլ է մտքի և էկրանի փոխհարաբերությունը: Ասելիքն առաջանում է զգայարաններից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում, և ամենաարագ ու շատ տեղեկատվությունը ստացվում է տեսողության միջոցով, ուրեմն անվիճելի է, որ էկրանը, հարուստ լինելով պատկերներով, կարող է դառնալ նախ՝ խոսքի, ապա՝ նաև լեզվի վրա ազդող գործոն. ենթադրենք, որ ինչ-որ մեկը գրում է կարճ հաղորդագրություն<sup>5</sup>, համացանցի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ չենք կարող բացառել, որ այդ պահին կարող է որևէ տեղեկատվություն հայտնվել պատուհանի անկյունում կամ նույնիսկ կենտրոնում, այն կարող է հետաքրքիր լինել ու գրավել ուշադրությունը, հաղորդագրություն գրողը կարող է այդ տեղեկությունն էլ դարձնել իր ասելիքի մի մաս, մինչդեռ դրա հայտնվելուց առաջ միտքը բոլորովին այլ պարունակություն ուներ, և հնարավոր է մեկ այլ ելք. հայտնվածը կարող է պարզապես ուշադրությունը շեղել, և միտքը, որ գուցե ուրիշ տեսք ունենար մինչ այդ, այլ արտահայտություն կստանա: «Երևակայական (վիրտուալ) տարածքը ծայրահեղ տարբեր տեքստերի «տուն» է՝ սկսած գովազդներից մինչև ակադեմիական հրապարակումներ»<sup>6</sup>: Էկրանը քննարկվող դեպքում մի տեղ է, որ «հանուն հաղորդակցության» միավորում է լեզվականն ու ոչ լեզվականը, գրագիտությունն ու անգրագիտությունը, կամ փոխվում են դրանց «չափման միավորները»: Բանավոր խոսքը կամ միտքը իրական-նյութական գրավոր տեքստի վերածելիս գուցե մեխանիզմն իսկապես այդքան պարզ է, բայց երբ բանավորը կամ միտքը պետք է դառնա իրական-կարծեցյալ տեքստ, «էկրանին հանձնվի», արտակարգ մի բան է կատարվում. գրավոր տեքստի բովանդակությունը բանավորի կամ մտքի արտահայտությունն է, որը, մեծ մասամբ ուղղված լինելով ոչ թե հենց հեղինակին, այլ մեկ ուրիշին, միևնույնն է, անմիջապես ազդում է նաև հեղինակի մտածելու ձևի և արագության վրա:

Մտածելու հետ կապված ցանկացած փոփոխություն հետագայում արտահայտվում կամ ազդում է և՛ բանավոր, և՛ նույնիսկ գրավոր խոսքի վրա: Ելեկտրոնային հաղորդակցության բառապաշարի մաս դարձած անգլերեն «oh my God» արտահայտության հապավում «OMG» կամ անգլերեն «ok» արտահայտությունը այսօր կարելի է հանդիպել սոցիալական կայքերը որպես հաղորդակցման միջոց օգտագործող բազմաթիվ անձանց նույնիսկ բանավոր խոսքում, ընդ որում՝ ոչ թե վերծանված, ամբողջական (ասենք՝ «oh my God» տեսքով), այլ հենց հապավումների նման: Հետաքրքիր է, որ հնարավոր է նաև հանդիպել դեպքերի, երբ էլեկտրոնային հաղորդակցման մեջ կիրառվող կետադրական նշանները կամ հույզեր արտահայտող միջոցները հայտնվում են գրավոր տեքստում նույնպես, օրինակ՝ երբ որպես բացական-

<sup>5</sup> [hy.wikipedia.org](http://hy.wikipedia.org) կայքում instant message-ը թարգմանված է բառացիորեն՝ «ակնթարթային հաղորդագրություն», տարածված է նաև «կարճ հաղորդագրություն» արտահայտությունը, բայց պետք է գործածել պարզապես «հաղորդագրություն» բառը, քանի որ երբեմն ասելիքը կարող է բազմաթիվ տողերով արտահայտվել, և ավելորդ է «ակնթարթային» բառը նույնպես, որովհետև երբեմն ուղարկված հաղորդագրությունը նույնիսկ մի քանի ժամ կարող է չհասնել ստացողին:

<sup>6</sup> **Zanettin F.** Testi elettronici e traduzione ipermediale: Tipologie testuali e modalità traduttive //www.intralea.it/volumes

չութեան արտահայտութիւնն բազմաթիւ ձայնավորները օգտագործվում են նաև գրավոր տեքստում, գրավոր տեքստում միանգամայն հնարավոր է բացականչութիւնը ցույց տալ համապատասխան կետադրական նշանով: Բացականչութիւնը կամ պարզապէս հույզը ոչ թէ տվյալ լեզվի համապատասխան կետադրութեան, այլ մի քանի տառանշանի միջոցով արտահայտելը, որ բնորոշ է էլեկտրոնային տեքստերին, ի դեպ, կարող է դիտվել որպէս գեղարվեստական գրականութեան մեջ երբեմն գործածվող գրեթէ նույն միջոցի կրկնութիւն կամ ազդեցութիւն, բայց էլեկտրոնային տեքստերում այնքան տարածված այս երևույթը այդպէս բացատրելը նշանակում է հավատալ կատարելութեան գոյութեանը՝ թէ աշխարհում բոլորը խոսքը կառուցում են գրական հմտութեամբ: Էլեկտրոնային տեքստերում այս երևույթը բառի բուն իմաստով հույզի արտահայտութիւնն է. զարմացած, վախեցած, հիասթափված կամ ոգևորված ինչ-որ մեկը ստեղծաշարի տվյալ կոճակը սեղմած կպահի մինչև հույզի «անկումը» ու նույնիսկ չի էլ հիշի, եթէ տեղյակ է, որ ժամանակակից ամենասիրված ու տարածված վեպերից մեկում նույնպէս հերոսների հույզերը մեծ մասամբ այդպէս են արտահայտվում (նկատի ունենք Ջոան Թոուլինզի «Harry Potter» վիպաշարը):

Էլեկտրոնային լեզվական տեքստը կարող է ստանալ ոչ լեզվական անթիւ լրացումներ, և նույնիսկ մի ամբողջ լեզվական տեքստ հնարավոր է ներկայացնել ընդամենը մեկ պատկերով<sup>7</sup>: Եվ հակառակը, ընդամենը մեկ գիծը կարող է հազարավոր լեզվական տեքստերի ծնունդ տալ: Ամեն ինչ տեքստ է, լեզվական տեքստ՝ թաքնված կամ բացահայտ, ենթադրվող կամ ուղղակի, ճիշտ այնպէս, ինչպէս իրական կյանքում է: Էլեկտրոնային հաղորդակցման լեզուն ունի չուսումնասիրված քերականութիւն և անհատականորեն սահմանվող ու կիրառվող այբուբեն: Չկան այդ լեզուն սահմանների մեջ պահող կանոններ: Այս լեզուն, ի տարբերութիւն մարդկային բնական հնչյունային լեզվի, ոչ թէ առաջացել է, այլ ստեղծվել է մարդու կողմից, և դրանում կատարվող ցանկացած շարժում մարդուց է կախված, ընդ որում՝ տվյալ անհատից:

Էլեկտրոնային տեքստը միշտ անհատական է: Էլեկտրոնային տեքստը իր հեղինակի մասին երբեմն կարող է պատմել ավելին, քան կարելի է պատկերացնել, կամ քան կարող է պատկերացնել ինքը՝ հեղինակը: Հաճախ ընդամենը երկտողը արտահայտում է անհատի ճաշակը, բարեկրթութիւնը և այլն, և սա նկատելով՝ համարձակվում ենք էլեկտրոնային հաղորդագրութիւնները համեմատել մի ամբողջ ժողովրդի կամ նույնիսկ քաղաքակրթութեան ստեղծած մշակութային արժեք տեքստի՝ գրականութեան հետ, քանի որ «ազգային բնավորութեան առանձնահատկութիւնը յուրատեսակ արտահայտութիւն է գտնում տվյալ մշակութի և թարգմանված տեքստերում»<sup>8</sup>: Իհարկէ, ձեռագիր տեքստը նույնպէս շատ բան է պատմում անհատի մասին, սակայն այդ տեսակի տեքստում անհատի դիմագիծ տեսնելու համար պետք է գոնե մասամբ տեղյակ լինել ձեռագրաբանութիւնից, իսկ տպագիր տեքստի դեպքում՝ գրականագիտութիւնից, ոճագիտութիւնից կամ հոգեբանութիւնից: Այս բոլոր գիտութիւններն իրենց չափանիշները կամ օրինաչափութիւն-

<sup>7</sup> Հաճախ, հատկապէս վերջին տարիներին, երբ սոցիալական կայքերը մեծ տարածում գտան, լեզվական տեքստը կարող է փոխարինվել նույնիսկ երաժշտութեամբ:

<sup>8</sup> Антипов Г., Донских О. и др. Текст как явление культуры. Новосибирск, 1989, с. 117:

ներն են թելադրում, սակայն էլեկտրոնային տեքստերը ընդունված կանոններով չափելու դեպքում ուսումնասիրողը միայն մասամբ կհասնի հաջողության: Ուրեմն կան տեքստի այս տեսակի քննության համար պետք է սահմանել նոր չափանիշներ, կան բոլորովին չանդրադառնալ դրան, որը տեսականորեն կրեթի այն եզրակացության, որ կան հաղորդակցական տեքստի արդեն անհետացող տեսակներ (օրինակ՝ ձեռագիր նամակ, հեռագիր և այլն), և չկան մարդկային հարաբերություն հաստատող ու զարգացնող նոր տեքստեր: Էլեկտրոնային տեքստը հակադրվում է լեզվական տեքստի արդեն եղած բոլոր դրսևորումներին, քանի որ ազատ է կանոններից: «Էլեկտրոնային տեքստը բացառիկ ճկունություն ունի»<sup>9</sup>, - ասվում է «Ինչու՞ էլեկտրոնային տեքստեր» հոդվածում, և այդ ճկունությունը հատկապես արտահայտվում է տեքստակազմության ամենատարբեր ձևերի ընտրությամբ, լեզվական ու ոչ լեզվական արտահայտչամիջոցների համադրությամբ: Այս տեքստերն ընդգրկում են և՛ գրական, և՛ խոսակցական տարրեր՝ բառապաշարից սկսած մինչև նույնիսկ կետադրություն, դրանք ինչ-որ չափով նման են իրական-նյութական տեքստերին, բայց ոչ ավելին: Չարժե առանձին տեսակներ համարել համակարգչի, փեյջերի և հեռախոսային կարճ հաղորդագրությունները: Դրանք բոլորն էլ, չնայած ծավալային տարբերություններին, նույն նպատակն ունեն, նույն սկզբունքով են կազմվում, գրեթե նույն արտահայտչամիջոցներն ու կազմության եղանակներն ունեն<sup>10</sup>: Էկրանային տեքստերի միջև տարբերությունները չնչին են, բայց դրանք բոլորը միասին էապես տարբերվում են թղթային տեքստերից: Հարցն այն է, որ դրանցից մեկը հաջորդում է մյուսին՝ լրացնելով իր նախորդի պակասն ու շտկելով թերությունները: Եթե այդ բոլոր միջոցներն այդպես էլ մնային հատուկ ոլորտների պահանջները բավարարելու, երևի նույնքան արագ զարգացում չապրեին, բայց քանի որ հասարակական կյանքը պահանջեց ծառայել նաև իրեն, դրանք ընդարձակեցին իրենց հնարավորությունները, հատուկ ոլորտներում օգտագործվող հաղորդակցման միջոցները աստիճանաբար դարձան ավելի հարմար ու հասանելի՝ այդպիսով որոշ չափով փոխելով նաև մարդկային հաղորդակցության որակը: Այդ փոփոխությունը արտահայտվեց նաև հաղորդակցում իրականացնող տեքստերի ընտրության մեջ. մեր օրերում ապրող մարդը, դժվար է ասել, երբևէ կգրի՞ ձեռագիր նամակ, թե՞ ոչ, որովհետև ձեռագիր նամակում հնարավոր չէ ժպիտ կամ տեսանյութ տեղադրել, մի քանի տասնյակ նկարներ խցկել ծրարի մեջ, ինչպես դա կարելի է տեսնել էլեկտրոնային նամակներում:

Փաստորեն զուտ լեզվական արտահայտչամիջոցներով ձևավորվող որոշ տեքստատեսակներ տեղի են տալիս համապատասխան այլընտրանքային տեքստատեսակներին: Մեր օրերի մարդու համար ձեռագիր նամակը ռոմանտիկ, էկզոտիկ բնույթ ունեցող հաղորդակցման միջոց կարող է լինել: Էկրանային նամակը միանշանակ ավելի մեծ տեղեկատվություն կարող է կրել, քանի որ լեզվական ու ոչ լեզվական միջոցների համադրություն է և ձեռագիր նամակին նման է միայն նրանով, որ վերընթերցելու հնարավորություն կա: Էկրանային տեքստերով հաղորդակցությունը նման է երկխոսության կամ

<sup>9</sup> [www3.iath.virginia.edu/seenet](http://www3.iath.virginia.edu/seenet)

<sup>10</sup> Տե՛ս **Украинцев Ю., Цветов М.** История связи и перспективы развития телекоммуникаций. Ульяновск, 2009, էջ 6:

գրույցի, որի որակն ու արտահայտչամիջոցները կախված են կողմերի հարաբերությունից, հեռավորությունից և այլն, ընդ որում՝ նշված պայմաններն ամենավճռական դերն ունեն:

Առաջարկում ենք էկրանային տեքստերը ըստ բնույթի և գործառույթի բաժանել երկու խմբի՝ գրույց-տեքստերի և նամակ-տեքստերի: Այս դեպքում բնավ կարևոր չէ դրանց ծավալը: Ձրույց-տեքստերը բանավոր գրույցներից տարբերվում են մտքերի փոխանակման արագությամբ. էկրանային գրույցները մտքերի փոխանակման արագությամբ դեռ զիջում են բանավոր գրույցներում մտքերի փոխանակման արագությանը: Իրականության մեջ ժամանակի չափման անտեսված միավորները այս դեպքում դառնում են գլխավոր՝ համակարգչի աշխատանքը կարգավորվում է վայրկյանների տասնորդական մասերով, իսկ համացանցում ժամանակը հարաբերական է դառնում. մեկ վայրկյանը հավասարվում է իրական կյանքի ժամերին, օրերին: Մյուս տարբերությունն այն է, որ այդ գրույցները նույնպես, ինչպես նամակները, վերընթերցելու հնարավորություն կա: Չնայած կան էլեկտրոնային հաղորդակցման այնպիսի միջոցներ, որոնց դեպքում, թվում է, գրույցը վերընթերցելու հնարավորություն չկա. այդպիսին է, օրինակ, «չաթ» (chat) կոչվածը, որի դեպքում խոսակցությունը միայն տվյալ պահին է հնարավոր վերընթերցել, չկա այն պահելու հնարավորություն: Սակայն երևակայական տարածության մեջ ոչինչ չի կորչում: Ձեռնված տեքստերը, փակված երկխոսությունները, իրականում ընդամենը թաքնված են, և ցանկացած տեղեկատվություն, որ կորած կամ ջնջված է, հնարավոր է վերականգնել՝ քիչ թե շատ ջանքեր գործադրելով:

Էլեկտրոնային գրույցները կարող են ընթանալ միաժամանակ մի քանի անձանց միջև, ճիշտ ինչպես իրական բանավոր գրույցները՝ մի տարբերությամբ. իրականում չես կարող անտեսել քեզ դիմողին, եթե դիմումն ընդունված, նույնիսկ շաբլոն արտահայտություն չէ, իսկ էլեկտրոնային գրույցներում միանգամայն հնարավոր է «հետաձգել» պատասխանը՝ անկախ որակից ու նշանակությունից: Առաջանում է բանավոր և էլեկտրոնային գրույցներ իրականացնող տեքստերի միջև մյուս տարբերությունը՝ տրամաբանական շարունակությունը՝ մի երրորդ անձի տեսանկյունից: Նկատի ունենք այն, որ բանավոր գրույցին չմասնակցող վկային դժվար թե տրամաբանությունից դուրս թվա այդ գրույցը, քանի որ նա տեսնում է իրադրությունը, իսկ էլեկտրոնային գրույցը կարդացող երրորդ մեկի համար հաճախ կարող է մտքերի անհետք շղթա թվալ (նկատի ունենք և՛ ժամանակային ուշացումները, և՛ անպատասխան մնացած հարցերը), քանի որ հնարավոր չէ միաժամանակ տեղյակ լինել, թե ինչ իրադրության մեջ են գրուցողները: Էլեկտրոնային գրույց-տեքստերը, հաճախ զուրկ լինելով հարց-պատասխանի տրամաբանական կապից, դուրս են մնում երկխոսություն, գրույց համարվող ավանդական տեքստերի շարքից (նկատի ունենք նույնիսկ նամակագրությունը, քննարկումները, հեռախոսագրույցները, որ, իհարկե, մեծ մասամբ բանավոր գրույցի պատճեններ կարելի է համարել):

Այսպիսով, էլեկտրոնային կամ էկրանային տեքստերը միջանկյալ դիրք ունեն գրավոր և բանավոր տեքստերի միջև. չնայած ճկունությանը՝ էլեկտրոնային տեքստերը, միևնույնն է, արագությամբ, ծավալով զիջում են բանավոր խոսքին, ձևով նման, բայց կառուցման կանոններով շատ տարբեր են գրա-

վոր տեքստերից: Էլեկտրոնային հաղորդակցության գիրը բովանդակային առումով կարելի է համեմատել նախնադարյան կամ հնագույն գրի հետ, երբ, օրինակ, քարանձավի պատերին ինչ-որ պատկերների միջոցով նկարագրվում են, ասենք, տվյալ օրվա կարևոր կամ ոչ այնքան հիշատակելի դեպքերը: Սակայն ներկայիս էկրանային տեքստը ոչ միայն քարանձավի պատերին չի գրվում, այլև միանգամայն հնարավոր է կրկնօրինակել հենց նույն տեղում կամ էլ առանց դժվարության դարձնել իրական-նյութական տեքստ:

Հաղորդակցություն իրականացնելու եկած բազմաթիվ միջոցները մարդկային լեզվին տվեցին նոր գործառույթներ, իսկ լեզվի հաղորդակցման գործառույթը իրականացնող միջոցներին ավելացավ ևս մեկը՝ էլեկտրոնային կամ էկրանային տեքստը, որ իր ենթատեսակներով կարծես թե լեզվի մաս է դարձել:

**Բանալի բառեր** – գրավոր խոսք, բանավոր խոսք, հեռահաղորդակցություն, էլեկտրոնային տեքստ, լեզվական տեքստ, ոչ լեզվական տեքստ, գրույց-տեքստ, մամուլ-տեքստ, ոչ լեզվական լրացում

**СИРАНУШ ОГАНЕСЯН – Общая характеристика электронного текста в сопоставлении с другими проявлениями речи.** – Электронный текст рассматривается в статье как современная разновидность самой крупной единицы языка – текста. Вообще текст, с одной стороны, является средством общения, а с другой – личным взглядом на объективную реальность. Учитывая эту его особенность, в статье разграничиваются языковые и неязыковые тексты, а те в свою очередь подразделяются на личный и общий типы. Современный тип текста определяется как яркий образец совокупности языковых и неязыковых элементов. Электронные же тексты в зависимости от своего характера и функции делятся на текст-беседу и текст-письмо. В статье делается вывод, что электронный текст занимает промежуточную позицию между письменным и устным типами. Анализируется влияние электронного текста на индивидуальную и устную речь и в итоге на язык. В наши дни благодаря гибкому сочетанию языковых и неязыковых компонентов электронный текст получает приоритет перед имеющими чисто лингвистическую структуру типами текста.

**Ключевые слова:** письменная речь, устная речь, телекоммуникация, электронный текст, языковой текст, неязыковой текст, текст-беседа, текст-письмо, неязыковой элемент

**SIRANUSH HOVHANNISYAN – A General Description of Electronic Texts in Comparison with Other Types of Speech.** – This article analyses the electronic text as a modern manifestation of the largest unit of language – *text*. Firstly, *text* is, in general, characterized as a unit exhibiting complex splitting. On the one hand it is a means of communication, and on the other hand, a personal view of objective reality. Taking this peculiarity into consideration, a distinction is drawn between linguistic and non-linguistic text types. These text types in turn are subdivided into personal and general types, respectively. Modern type of the text is defined as an expressive example set of linguistic and non-linguistic elements. Further, depending on its nature and functions,

electronic text is divided into two groups: a *text chat* and a *text message*. The analysis of the latest manifestations of the *text* (compared to its traditional types) reveals that the electronic text types take an intermediate position between written and oral text types. The article discusses the influence of electronic text on individual speech, spoken language and, eventually, on language itself. Nowadays, due to the versatility to integrate both linguistic and non-linguistic components, electronic versions of linguistic units are favored over the already stated text types with strictly linguistic structure.

**Key words** – *written language, oral speech, telecommunication, electronic text, linguistic text, non-linguistic text, text-chat, text-message, non-linguistic component*